

**ՀՀ և ԼՂՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ**

Վարդան Բոստանջյան
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արթուր Թաղևոսյան
Արցախի պետական համալսարանի ասպիրանտ

Բանալի բառեր. հարկային համակարգ, ԼՂՀ տնտեսություն, տնտեսական աճ

Անկախացման և տնտեսական ինքնուրույն քաղաքականության վարման անցած ժամանակահատվածում հայկական երկու պետություններում ազատական հարաբերությունների ձևավորմանը և շուկայական մեխանիզմների ստեղծմանն ուղղված բարեփոխումներում առաջին պլան մղվեց հատկապես հարկային հարաբերությունների կարգավորման ուղղությամբ աշխատանքները, քանի որ նորանկախ հանրապետությունների համար առաջնահերթ խնդիրը պետական գործառույթների իրականացման նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացումն էր: Արդյունքում, հայտնի պատճառներով Հայաստանում և Արցախում ձևավորվեցին ինքնուրույն հարկային համակարգեր, որոնք, ունենալով հարկման սկզբունքների, կիրառվող մեթոդների, իրավական կարգավորման և վարչարարության կազմակերպման շատ ընդհանրություններ, միաժամանակ կիրառում էին միմյանցից տարբերվող որոշ մոտեցումներ, որոնք, բնականաբար, բացասաբար էին ազդում հանրապետություններում իրականացվող ընդհանուր հարկային քաղաքականության վրա:

ՀՀ և ԼՂՀ հարկային համակարգերի գործունեությունում նկատվող տարբերությունները, պայմանավորված լինելով երկու երկրների տնտեսական զարգացման անհամամասնություններով, տնտեսությունների կառուցվածքներով, քաղաքական և սոցիալական բնույթի խնդիրներով, օբյեկտիվ և սուբյեկտիվ այլ հանգամանքներով, միևնույն ժամանակ պահանջում են դրանց համահարթեցում, հետևաբար նաև հանրապետությունների հարկային համակարգերի փոխգործակցության արդյունավետության բարձրացում: Անկախ հարկային հարաբերությունների կարգավորման միատեսակ սկզբունքներից և հանրապետություններում սահմանված հարկատեսակներից նրանցում վարվող հարկային քաղաքականություններում առկա տարբերությունները դրսևորվում են ոլորտում կիրառվող ընթացակարգերում, հարկերի դրույքաչափերում, դրանց գանձման և հարկային պարտավորությունների կատարման կանոնակարգերում, ար-

տոնությունների տրամադրման և այլ հարցերում: Դրանց լուծումն, անշուշտ, ենթադրում է ԶԶ-ում և ԼԴԶ-ում իրականացվող հարկային քաղաքականությունների համակողմանի կոորդինացում և ներդաշնակեցում, ինչը, բնականաբար, պայմանավորված է ազգային ընդհանուր շահերով, միասնական տնտեսական տարածքով, միևնույն արժույթով և այլն:

ԶԶ-ում և ԼԴԶ-ում տնտեսական ազատական հարաբերությունների ձևավորման անցած ժամանակահատվածում իրականացված հարկային բարեփոխումների հետ կապված գործընթացների համակողմանի ուսումնասիրությունը վկայում է հայկական երկու պետությունների հարկային համակարգերի կոորդինացված գործունեության իրականացման և դրանցում վարվող տնտեսական քաղաքականությունների համակարգվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտության մասին: ԶԶ և ԼԴԶ հարկային համակարգերն, ունենալով հարկման սկզբունքների, օրենսդրափրավական հիմքերի և հարկային վարչարարության կազմակերպման մի շարք ընդհանրություններ, միաժամանակ իրականացրել են առանձնացված գործունեություն: Երկու հանրապետություններում էլ, գործելով հարկման սկզբունքների կիրառման, հարկման օբյեկտների և բազաների որոշման, ուղղակի, անուղղակի, գույքային և այլ հարկատեսակների սահմանման նմանատիպ մոտեցումներ, այդուհանդերձ, ընտրված տնտեսական ռազմավարությամբ պայմանավորված ԶԶ-ում և ԼԴԶ-ում սահմանված հարկատեսակների կառուցվածքներն երկուսում, դրանց դրույքաչափերի սանդղակներում, հարկային արտոնությունների տրամադրման ընթացակարգերում, ինչպես նաև հարկային վարչարարության գործելաձևերում առկա են եղել նկատելի տարբերություններ: ԶԶ և ԼԴԶ հարկային համակարգերի փոխադարձ կապի կարևորությունը, պայմանավորված լինելով հանրապետությունների տնտեսությունների սերտ ինտեգրվածությամբ և միասնական մաքսային սահմանների առկայությամբ, նոր իրողությունների, հատկապես, ԵՏՄ-ին ԶԶ-ի անդամակցության պայմաններում ենթադրում է նրանց հարկային համակարգերի գործունեության կոորդինացում և փոխգործակցության ձևերի կատարելագործում:

Հարկային հարաբերությունների կարգավորման նպատակով ԶԶ և ԼԴԶ կառավարությունները ներկայումս առաջնորդվում են որոշակի համաձայնագրերով, որոնցով, ընդհանուր առմամբ, լուծվում են մաքսային սահմանով ներմուծման և արտահանման, հարկերի հաշվարկման և վճարման, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության հետ կապված խնդիրները: Մասնավորապես, երկու հանրապետությունների հարկային օրենսդրությամբ էլ "ներմուծում", "ներմուծում ազատ շրջանառության համար",

"արտահանում" և "արտահանում ազատ շրջանառության համար" հասկացությունները սահմանված են որպես ՀՀ մաքսային սահմանով ներմուծում կամ արտահանում, իսկ միմյանց միջև մաքսային սահմանների փոխարեն գործում են ապրանքանյութական արժեքների ներմուծումն ու արտահանումը հաշվառող հսկիչ կետեր: Հստակեցված են մի հանրապետության տնտեսավարող սուբյեկտների կողմից մյուս հանրապետության վարչական տարածքում առանձնացված ստորաբաժանումներով, ներկայացուցչություններով ու մասնաճյուղերով գործունեության իրականացման արդյունքներից առաջացող հարկերի հաշվարկման և վճարման կարգերը: Ձևավորված են մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների նկատմամբ անուղղակի հարկերի հաշվանցման և վերադարձման մեխանիզմները, ներդրված են հարկային հաշիվների լրացման ու դուրսգրման կարգեր և այլն: Նշված գործընթացների ժամանակ ծագող հարցերի վերաբերյալ հանրապետությունների հարկային մարմինները միմյանց տրամադրում են համապատասխան տեղեկատվություն: Համաձայնեցված գործողությունների արդյունքում նրանց միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառվում է, սակայն դա դեռևս չի հանդիսանում հանարապետությունների հարկային համակարգերի արդյունավետ փոխգործակցության երաշխիք:

ՀՀ և ԼՂՀ հարկային համակարգերի փոխգործակցության արդյունավետության բարձրացման նպատակով անհարժեշտ է բացահայտել դրանց հետագա զարգացման միտումներն ու առանձնահատկությունները՝ համալիր ուսումնասիրության ենթարկելով այդ համակարգերի ձևավորման փուլերը և վերլուծելով իրականացված բարեփոխումների արդյունքները: Ընդ որում, պետք է հատկապես կարևորվել է հարկման ժամականակից մոտեցումների ներդրման անհրաժեշտությունը՝ շեշտը դնելով հարկման մեխանիզմների կատարելագործման և հիմնավորված ու օպտիմալ դրույքաչափերի սահմանման վրա: Տնտեսական նոր հարաբերություններին անցման գործընթացի գլխավոր խնդիրը պետք է դառնա տնտեսության կարգավորման գործում պետության մասնակցության ճիշտ սահմանների և ձևերի որոշումն, իսկ հարկային բարեփոխումների հիմնական նպատակը՝ հարկերի ֆիսկալ և կարգավորող գործառույթների միջև օպտիմալ հարաբերակցության սահմանումը: Միջնաժամկետ հեռանկարում հարկային բարեփոխումները պետք է ուղղված լինեն հարկային օրենսդրության կատարելագործմանը, դրա պարզեցմանը, հարկային համակարգի կայունության և թափանցիկության ապահովմանը, չեզոքության բարձրացմանը և այլն: Նշված պայմանների առկայության դեպքում

հանրապետությունների հարկային համակարգերը կարող են դառնալ նրանց սոցիալ-տնտեսական առաջընթացին նպաստող կարևոր գործոն:

Հարկային բարեփոխումների հիմնական նպատակի իրագործումն ենթադրում է դրանց կայունության և կանխատեսելիության, հարկային կարգապահության և պարտավորությունների կատարման կամավորության, ինչպես նաև հարկման արդարացիության սկզբունքների ապահովում: Ակնհայտ է, որ այդ ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար, առաջին հերթին, պետք է հնարավորինս պարզեցնել հարկերի վճարման գործընթացը և կրճատել դրա հետ կապված փաստաթղթերի ձևակերպման համար պահանջվող ժամանակը: Արդի պայմաններում հարկային վարչարարության բարեփոխումների առաջնահերթություններից մեկը դարձել է նշված մետեցումների ապահովումը և հարկային մարմնի կողմից հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը: Այս հանգամանքը մեծապես կնպաստի հարկերի կամավոր վճարման սկզբունքների արմատավորման, ինչն արդյունավետ վարչարարության իրականացման անհրաժեշտ հիմքն է: Արդյունքում, հարկերի հաշվարկման և վճարման պրոցեսին հարկային մարմնի միջամտությունը կհասցվի նվազագույնի և էականորեն կփոքրանա սուբյեկտիվ մոտեցումների հավանականությունը: Այլ խոսքով, նվազեցնելով հարկ վճարողի կողմից իր հարկային պարտավորությունները ճիշտ գնահատելու և կատարելու համար անհրաժեշտ ժամանակը, հարկերի չվճարման հավանականությունը կհասցվի նվազագույնի: Ակնհայտ է, որ դրա համար հարկային մարմինները պետք է ձեռնարկեն շարունակական քայլեր իրենց աշխատանքի թափանցիկությունը բարձրացնելու, հարկ վճարողների նկատմամբ անաչառ մոտեցումներ կիրառելու և հարկ վճարողների շրջանակում վստահության մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ:

Հայաստանի և Արցախի հարկային համակարգերի արդյունավետության բարձրացման գործում մեծ դեր կարող է ունենալ հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը: Այդ ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար հարկային մարմինները հարկ վճարողներին պետք է առաջարկեն ծառայությունների մատուցման արդյունավետ ուղիներ, էապես ընդլայնելով էլեկտրոնային ծառայությունների շրջանակը և նվազագույնի հասցնելով "հարկային մարմին-հարկատու" շփումները: Այդ առումով, հանրապետություններում շարունակվող հարկային բարեփոխումները պետք է ուղղված լինեն հարկային համակարգերի մատչելիության և արդյունավետության ապահովմանն, ինչն, իր հերթին, ենթադրում է հետևողական աշխատանքների իրականացում

հարկային օրենսդրության կատարելագործման, հարկատեսակների ձևավորման, դրանց համախմբման, հարկային գործընթացի պարզեցման և, ընդհանրապես, հարկ վճարողների համար պարտավորությունների կատարման առավել նպաստավոր պայմանների ստեղծման ուղղությամբ: Այս առումով, ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինները հանրապետությունների տնտեսավարողների հետ առնչվելիս պետք է, առաջին հերթին, առաջնորդվեն հարկային համակարգի մատչելիության մակարդակը բնութագրող երեք հիմնական չափորոշիչներով՝ հարկատեսակների քանակի, հարկազանձման դրույքաչափի և հարկային պարտավորությունները կատարելու համար համար պահանջվող ժամանակի ճիշտ սահմանմամբ:

Հարկային համակարգի արդյունավետության չափորոշիչներ պետք է դառնան հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխումը, հարկային համակարգի պարզեցումը, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը և այդ նպատակով կատարվող ծախսերի կրճատումը: Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը պետք է իրականացվի հարկային մարմինների իրավասությունների հստակեցման, հարկատուների պատասխանատվության բարձրացման զուգակցմամբ: Հարկային համակարգում բարեփոխումների իրականացումը չպետք է սահմանափակվի միայն հարկային օրենսդրության կատարելագործմամբ: Դրանք պետք է հետապնդեն նաև հարկային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ օպերատիվ վերահսկողության մեխանիզմների կատարելագործման և ստվերային գործարքների բացահայտման գործուն մոտեցումների ներդրման նպատակ:

Հարկային բարեփոխումները պետք է կրեն շարունակական բնույթ և ուղղված լինեն հարկային հարաբերությունների կարգավորման ոլորտում արդարության և չեզոքության մակարդակի բարձրացմանը, հարկատուների համար հավասար պայմանների ստեղծմանը և հարկային հիմնավորված արտոնությունների տրամադրմանը: Նշված նպատակների իրագործումը պահանջում է տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա բացասաբար ազդող ցածր արդյունավետություն ունեցող հարկերի և տուրքերի վերանայում, գործող հարկատեսակների հաշվարկման ընթացակարգերի և մեխանիզմների հստակեցում և պարզեցում, հարկային վարչարարության կատարելագործում և հարկերի հավաքագրման մակարդակի բարձրացում, հարկային հարաբերությունների կարգավորման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմների ներդրում, հարկումից խուսափելու հնարավորությունների բացառում և այլն: Հարկային բարեփոխումներն, առաջին հերթին, պետք է հետապնդեն

հարկերի ֆիսկալ և կարգավորող գործառույթների միջև օպտիմալ հարաբերակցության հաստատման նպատակ: Ընդ որում, դրա համար պետք է իրականացնել այնպիսի հարկաբյուջետային քաղաքականություն, որպեսզի կառավարությունը, մի կողմից, կարողանա պետական գործառույթների կատարման համար ապահովել անհրաժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացում, իսկ, մյուս կողմից՝ ֆինանսավորել սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղություններն ու ծրագրերը: Սակայն, այդ ինդրի լուծումը չպետք է բացասաբար ազդի հարկերի կարգավորող դերի վրա, ստեղծելով չհիմնավորված հարաբերություններ տնտեսվարող սուբյեկտների հետ, հետևաբար, վտանգելով նաև հարկման բազայի ընդլայնման հեռանկարները: Այդ առումով, բարեփոխումները պետք է ուղղված լինեն հարկային հարաբերությունների կատարելագործմանը, դրամավարկային քաղաքականության հետ դրանց կոորդինացվածության աստիճանի բարձրացմանը, հարկային համակարգի կայունության և թափանցիկության ապահովմանը և այլն: Նշված պայմանների առկայության դեպքում միայն հարկային համակարգը կարող է դառնալ երկրի տնտեսական առաջընթացին նպաստող կարևոր գործոն:

Հարկային համակարգի արդյունավետության առումով չափազանց կարևոր է ստվերային տնտեսության դեմ պայքարը, որն, անշուշտ, չի կարող սահմանափակվել միայն վարչարարական մեթոդներով: Դրա համար պետք է ՀՀ-ում և ԼՂՀ-ում ձևավորել այնպիսի տնտեսական միջավայր, որիում գործող սուբյեկտները ցանկություն ունենան վճարելու հարկեր և ստանալու օրինական եկամուտներ: Այդ նպատակով պետք է հարկային քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ նախապատվությունը տալ հարկերի կարգավորիչ գործառույթի իրացմանը:

Ցանկացած երկրում բյուջեների ձևավորման հիմնական աղբյուրը հարկային մուտքերն են: Չարգացման ներկա փուլում ՀՀ և ԼՂՀ կառավարությունները կարևորելով հարկային եկամուտների մակարդակը և դրանց ապահովմանն ուղղված վարչարարության ժամանակակից մոտեցումների կիրառումը, վարվող հարկային քաղաքականությամբ գործարար աշխարհի համար պետք է ստեղծեն բարենպաստ պայմաններ, ապահովելով "դեմքով դեպի հարկատուն" սկզբունքի գերակայություն և հաստատելով տնտեսավարող սուբյեկտների հետ գործընկերային կապեր: Այդպիսի, ինչպես նաև հարկային համակարգի նպատակային, իրատեսական և վերահսկելի բարեփոխումների դեպքում միայն կբարելավվի գործարար միջավայրը, կխթանվի տնտեսական աճը և որպես հետևանք՝ կապահովվի հարկային եկամուտների առավելագույն մակարդակ:

ՀՀ-ում և ԼՂՀ-ում համակողմանիորեն խթանելով փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, միևնույն ժամանակ, հատուկ ուշադրություն պետք է դարձնել խոշոր բիզնեսի լիարժեք և ամբողջական, իրական ծավալներով հարկմանը, քանի որ պետական բյուջեի հարկային եկամուտների հիմնական մասն այսօր ապահովվում է հատկապես դրա կողմից: Խոշոր գործարարների կողմից հարկային պարտավորությունների կատարումն էականորեն կնպաստի հարկային համակարգի կայացմանն ու զարգացմանը: Հարկային ոլորտում հանրային հսկողության դերը բարձրացնելու նպատակով հարկային իրավախախտումների, դրանց նրկատմամբ հարկային ծառայության կիրառած գործողությունների, ինչպես նաև պատասխանատվության միջոցների մասին պետք է պարբերաբար իրականացնել համապատասխան հրապարակումներ: Այս ուղղությամբ իրականացված քաղաքականությունն, անշուշտ, կնպաստի հարկ չվճարող կազմակերպությունների թվաքանակի նվազմանը և հարկային մշակույթի զարգացմանը: Հայկական երկու պետություններում իրականացվող բարեփոխումները պետք է հիմնվեն հարկային բարեփոխումների առաջավոր փորձի վրա և ներառեն բոլոր այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են հանրապետությունների տնտեսություններին: Ընդ որում, հարկային վարչարարությունն, ինչպես արդյունաբերական առաջատար երկրներում, պետք է հիմնվի ինքնահայտարարագրման սկզբունքի վրա: Բոլոր հիմնական հարկատեսակների գծով հարկատուները ինքնուրույն պետք է լրացնեն և ներկայացնեն հայտարարագրեր: Հարկային մարմինները վարչական եղանակով հարկեր չպետք է հաշվարկեն, ինչև, անշուշտ, կկրճատի հարկային վարչարարության ծախսերը: Այդ առումով, ժամանակին և կոռեկտ հայտարարագրեր ներկայացնողներն ու սահմանված կարգով հաշվապահական հաշվառում վարողները, պետք է խրախուսվեն, որոնցը, որպես "վստահելի" հարկատուներ, պետք է տրվի լրացուցիչ արտոնություններ: Վարվող հարկային քաղաքականությանը զուգահեռ պետք է պարբերաբար ուսումնասիրել հարկ վճարողների կարծիքը այդ վերաբերյալ, ինչպես նաև քայլեր ձեռնարկել պարզաբանումների հիմնավորման ամրապնդման ուղղությամբ, ինչի արդյունքում կհստակեցվի դրանց տրամադրման հիմքերը, կանոնները և հրապարակայնությունը: Դիտարկված խնդիրների լուծման և հարկային համակարգերի կոորդինացված գործունեության արդյունքում կարելի է ներդաշնակեցնել հայկական երկու պետություններում վարվող տնտեսական քաղաքականությունները, ինչը կարևոր դեր կխաղա "պետություն-մասնավոր հատված" երկխոսության խթանման, հարկային համակարգի նկատմամբ վստահության ամրապնդման և օրինապահության մշակույթի զարգացման գործում:

Վարդան Բոստանջյան, Արթուր Թադևոսյան
ՀՀ և ԼՂՀ հարկային համակարգերի փոխգործակցության
արդյունավետության բարձրացման ուղիները

Բանալի բառեր. հարկային համակարգ, ԼՂՀ տնտեսություն, տնտեսական աճ

Հոդվածում քննարկված են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային համակարգերի արդյունավետ փոխգործակցության ապահովման խնդիրները: Ներկայացվել են երկու պետությունների հարկային համակարգերին բնորոշ առանձնահատուկ գծերը և տնտեսական զարգացման ժամանակակից փուլում նրանց կողմից լուծման ենթակա խնդիրները: Առաջարկվել են այն հիմնական մոտեցումները, որոնց գործնական կիրառումը հնարավորություն կտա բարձրացնել հարկային համակարգերի գործունեության արդյունավետությունը և նպաստել նրանց վերապահված հիմնական գործառույթների պատշաճ և ամբողջական իրականացմանը:

Вардан БОСТАНДЖЯН, Артур ТАДЕВОСЯН
Сотрудничество и пути повышения эффективности налоговых систем РА и НКР

Ключевые слова: налоговая система, экономика НКР, экономический рост

В статье обсуждаются проблемы Республики Армения и Нагорно-Карабахской Республики в целях обеспечения эффективного сотрудничества между налоговыми системами. Представлены типичные черты налоговых систем двух стран и задачи, которые предстоят разрешению на современном этапе экономического развития. Рекомендованы основные подходы, практическое применение которых позволит повысить эффективность деятельности налоговых систем и содействовать надлежащему и полному выполнению возложенных на них основных функций.

Vardan Bostanjyan, Arthur TADEVOSYAN
Cooperation and ways to enhance the effectiveness of the RA and NKR tax systems

Key words: tax system, NKR economy, economic growth

The article discusses the problems of the Republic of Armenia and the Nagorno-Karabakh Republic to ensure effective cooperation between tax systems. It presents the typical features of the tax systems of the two countries and the challenges that lie ahead on the resolution of the current stage of economic development. Basic approaches are recommended, the practical application of which will improve the efficiency of tax systems and to facilitate the proper and full implementation of their assigned basic functions.